ՍՅՈՒՆԻՔԻ XVII—XVIII ԴԱՐԵՐԻ ՎԱՆՔ-ԱՄՐՈՑՆԵՐԸ

Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

Պատմական Հայաստանի կարևորագույն նահանգներից մեկը՝ Սյունիքը, հնուց ի վեր հայտնի է իր անառիկ ամրոցներով և պաշտպանական կառուցվածքների ամբողջ սիստեմներով։ Բայց եթե վաղ շրջանի բերդերն ու ամրոցները՝ Բաղաբերդը, Երնջակը, Որոտնը, Սմբատաբերդը վաղուց իրենց արժանի տեղն ունեն հայկական ամրոցաշինության պատմության մեջ, ապա ուշ միջնադարի Սյունիքի պաշտպանական կառուցվածքները համարյա չեն ուսումնասիրված և դեռ չեն ներկայացված մասնագիտական գրականությունում։

Սյունիքի ուշ միջնադարի պաշտպանական կառուցվածքները կարելի է բաժանել երկու խմբի՝ վանք-ամրոցների և բերդերի։ Առաջին խմբին են պատկանում Շատին վանքը, Տաթևի Մեծ անապատը, Հալիձորի բերդը (Հալիձորի կուսանաց անապատը)[1], Կնեվանքը, երկրորդից պահպանվել է միայն Մեղրու բերդը։ Առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում վանք-ամրոցի հորինվածքը՝ երկու տարբեր ճարտարապետական օրգանիզմների՝ կրոնական և պաշտպանական կառուցվածքների յուրօրինակ միավորումը։

Դեռ IX—XI դարերում միջնադարյան Հայաստանի վանքերը շրջապատվում էին պարիսպներով, որոնք, սակայն, որպես պաշտպանական կառուցվածքներ բավական համեստ էին, և վանքերը ոչ մի հավակնություն չունեին ամրոցների դեր խաղալու։

Դրությունն արմատապես փոխվեց Հայաստանի անկախության ու պետականության կորստից հետո, երբ վանքերը սկսեցին իրենք մտածել սեփական անվտանգության ապահովման մասին։ Թե՛ նոր կառուցվող և թե՛ արդեն գոյություն ունեցող մենաստանները շրջապատվեցին այնպիսի պաշտպանական կառուցվածքներով, որոնք բնորոշ են ամրոցներին։

XII—XIII դդ. բուրգերով պարիսպներ կառուցվեցին մի շարք կոմպլեքսներում, որոնցից կարելի է նշել Հաղբատի և Առաքելոց վանքերը։

Սակայն վանք-ամրոցների կառուցումը լայն տարածում ստացավ առանձնապես XVII դարում։ Հայաստանի վանքերի մեծ մասն այդ դարում շրջապատվեց պաշտպանական կառուցվածքներով (Գնդեվանք, Տաթևի վանք, Նորավանք, Գեղարդ, Հառիճա վանք և այլն)։ Բայց վանք-ամրոցն իր ճարտարապետական ավարտուն կերպարն ստացավ XVII դ. կառուցված նոր վանքային կոմպլեքսներում (Խոր-վիրապ, Տաթևի մեծ անապատ, Շատին վանք, Հալիձորի կուսանաց անապատ), որտեղ անսամբլը հենց սկզբից կառուցվում էր

---

1 *Հալիձորի կուսանաց անապատը կառուցվել է XVII դարում։ Այն XVIII դարի 20-ական թվականներին Դավիթ-Բեկը վերակառուցում է որպես բերդ և դարձնում ազատագրված Ղափանի կենտրոնը։*

կրոնական և պաշտպանական տարրերի զուգակցման միասնական մտահղացումով։

XVII—XVIII դդ. Սյունիքի վանք-ամրոցները, ինչպես և ավելի վաղ կառուցված որոշ վանքեր (Տաթև, Գնդեվանք, Որոտնավանք), տեղադրված են դժվարամատչելի, բարձրադիր վայրերում՝ լեռների զառիթափ լանջերին, հեռու բնակավայրերից և բանուկ ճանապարհներից։ Այսպես, բարձր լեռան լանջին, գագաթից քիչ ցածր, խիտ անտառի մեջ թաքնված, կառուցված է Բեխի անապատը։ Նման տեղադրություն ունի և Հալիձորի Հարանց անապատը։ Շատին վանքը կառուցված է Եղեգիսի ձորից շատ բարձր, դժվարամատչելի մի ամայի վայրում։ Անմատչելի տեղում է կառուցված Հալիձորի բերդը (Հալիձորի կուսանաց անապատը)։ Վանք-ամրոցների տեղաբաշխումը Սյունիքում, ընդհանրապես վերցրած, իհարկե, չի ելնում ստրատեգիական նկատառումներից՝ ստեղծելու Հայաստանի այս մասում պաշտպանական կառուցվածքների ցանց։ Մենաստանները կառուցվում էին կամ ավելի վաղ՝ X—XIV դարերում գոյություն ունեցող կրոնական կենտրոնների տեղում (Շատին վանք, Կնեվանք, Բեխի անապատ), կամ էլ խոշոր վանքերի մոտ (Տաթևի Մեծ անապատ)։ Վանք-ամրոցների պաշտպանական միջոցառումներում հիմնականը՝ իրեն, մենաստանի անվտանգության ապահովումն էր։ Միայն Հալիձորի կուսանաց անապատը, շնորհիվ իր բացառիկ հարմար դիրքի, դարձավ XVIII դարի անկախ Ղափանի կենտրոնն ու հիմնական ամրոցը և մեծ դեր խաղաց Դավիթ-Բեկի ազատագրական կռիվների ժամանակ։

Հալիձորի բերդը տեղավորված է Ողջի գետի աջ ափի զառիթափ լեռնալանջի փոքրիկ գոգավորության վրա։ Այս բարձունքից իշխելով շրջապատի վրա, բերդը հսկողության տակ է պահում Ողջիի ձորը և նրանով անցնող այն կարևոր ճանապարհը, որը միացնում է Կապանը Բաղաբերդի և Տաշտոնի լեռնանցքով՝ Մեղրիի հետ։

Հետաքրքրական է Հալիձորի բերդի պաշտպանական համակարգը։ Գլխավոր հատակագծում պարիսպները ունեն անկանոն քառանկյան ձև։ Պարըսպապատերը հաստ չեն՝ լայնությունը մոտ մեկ մետր է։ Այսպիսի չափը XVIII դարի պաշտպանական կառուցվածքներում բացատրվում է նրանով, որ հրազենի առկայության դեպքում հաստ պարիսպներն արդեն ավելորդ էին՝ բաբաններով գրոհելու ժամանակաշրջանն անցել էր, իսկ հրանոթը դեռ լայն կիրառություն չուներ լեռնային վայրերում մղվող պատերազմներում։ Ամրոցն ունի շրջանաձև հատակագծով մեկ բուրգ՝ հարավ-արևմտյան անկյունում։ Բուրգը տեղադրված է կոմպլեքսի համեմատաբար թույլ մասում, որովհետև եթե հյուսիսից և հարավից բերդը վերևից իշխում է շրջապատի վրա, ապա հարավ-արևմուտքից, ընդհակառակը, այն ցածր է գտնվում տեղանքի նկատմամբ և խոցելի է այդ կողմից։

Հալիձորի բերդը պարիսպներից և բուրգերից բացի այժմ պահպանված ուրիշ պաշտպանական կառուցվածքներ չունի։ Եկեղեցուն կից երկհարկանի շինությունները, որոնք նայում են դեպի արևելք՝ դեպի ձորը, հավանաբար օգտագործվել են և ռազմական նպատակներով։ Ցավոք, հարավային խմբի արևելյան մասը լրիվ քանդված է և հնարավոր չէ վերականգնել նրանց սկզբնական կերպարը, մանավանդ դեպի ձորը՝ թշնամու մոտեցման հիմնական կողմը նայող մասի հորինվածքը։ Հյուսիսից՝ կից շինությունների երկրորդ հարկը երկար թաղածածկ սենյակ է, որն ամբողջ լայնությամբ կամա-

բակապ բացվածքով դուրս է գալիս առաջին հարկի հարթ կտուրը։ Այս հարթակը գտնվելով արևելյան պարսպից ինը մետր հեռու և երեք մետր բարձր, փաստորեն վեր է ածվում բերդի արևելյան մասի պաշտպանական սիստեմի երկրորդ աստիճանի (պարսպից հետո)։ Հավանաբար, այսպիսի հարթակ եղել է և հարավային կողմում, երկրորդ հարկի զույգ սենյակների առջև։ Հարթակից վտանգի ժամանակ կարելի է կրակի տակ վերցնել պարիսպների մատույցները, կրկնապատկելով պաշտպանական համակարգը։

Նման հաջող բազմաստիճան համակարգը և անառիկ դիրքը թույլ են տվել Դավիթ-Բեկին իր 350 զինակիցներով հաջողությամբ դիմադրելու թուրքական 70.000-անոց բանակին[2]։ Եթե ընդունենք, որ թշնամու քանակը որոշ չափով գուցե և չափազանցված է պատմիչի կողմից, բայց, համենայն դեպս, ուժերի հարաբերության անհավասարությունն ակներև է՝ պաշարողները հարյուրապատիկ ավել են։

Հալիձորի բերդի պաշտպանության տեսարանները մեծ հետաքրքրություն են ներկայացնում պատմական-ռազմագիտական առումով։ Պարզվում է, որ այդ մարտերում հրետանի չի օգտագործվել, չնայած հրազենի առկայությանը, ամրոցների պաշարման ժամանակ պարիսպներից ներս թափանցելու համար օգտագործել են դեռ վաղ միջնադարից կիրառվող սանդուղքները։ Իսկ պաշտպանվողները սրա դեմ պայքարել են ճիշտ այնպես, ինչպես հարյուրամյակներ առաջ. «...զահագին մեծամեծ մեքենայս (ըստ կերպի մեծամեծ սանդղոց, թուով քսանևվեց) ընդ ինքնեանց բարձեալ բերէին, գային մերձենային, և ի պարիսպ անդր յեցուցանէին, և բազմութիւն խուժանին յերիս խումբս բաժանէին, և յերից կողմանց գրոհ տուեալ ի մեքենայից անտի ի վերայ պարսպացն դիմէին։ Իսկ պահապանք պարսպացն ի վերուստ անտի հարեալ զնոսա, ի մեքենայիցն ի վայր թօթափէին...»[3]։

Շատին վանքը հատակագծում ունի մոտավորապես ուղղանկյան ձև։ Վանքի հիմնական մոտեցումը հարավից է (Նղեգիսի ձորից), որի պատճառով այս կողմի պարիսպն ուժեղացված է երեք, կիսաշրջանաձև հատակագծով, բուրգերով։ Հարավային պարսպին կից, բակի կողմից, պատի ամբողջ երկարությամբ կառուցված են երկհարկանի շինություններ, որոնց վերին հարկում եղել են բնակելի սենյակներ (այժմ չեն պահպանվել), իսկ ներքևի կիսանկուղային հարկը՝ տնտեսական նշանակությունից բացի ունեցել է նաև պաշտպանական-ռազմական նշանակություն։ Այսպես, արևմտյան բուրգի մուտքը անմիջականորեն նկուղից է, իսկ արևելյանինը՝ նկուղին կից սենյակից։ Նկուղային հարկը, որը կազմված է երկու երկար սրահներից, ունի լուսամուտներ դեպի դուրս։ Սրանք բարձր լինելով պարիսպի ստորոտից՝ կարող էին պաշտպանության ընթացքում ծառայել որպես հրակնատներ։

Համեմատաբար անբարենպաստ պայմաններում են գտնվում մյուս երեք պարսպապատերը։ Ունենալով 50 մետրից ավելի (հյուսիսայինը՝ 80-ից ավել) երկարություն, նրանք զուրկ են բուրգերից և շարված են անմշակ քարերից։ Սակայն կառուցողները կարողացել են այս պարիսպներին նույնպես կայունու-

---

2 «Դաւիթ-Բէգ», Վաղարշապատ, 1871, էջ 46—47։
3 «Դաւիթ-Բէգ», էջ 47—48։

թյուն տալ։ Այսպես՝ հյուսիսային, ամենաերկար պարիսպը իրականացված է ոչ թե ուղղաձիգ, այլ բեկբեկված, ստանալով հատակագծում մոտավորապես սեգմենտի ձև։ Սա չի բխում տեղանքից, բլրի հավասարաչափ թեքություն ունեցող լանջից, սակայն զգալի կոշտություն է հաղորդում պատին։ Երեք պարսպապատերն էլ ունեն սեղանաձև կտրվածք՝ հիմքում լայնությունը 1,60 մ. է, իսկ վերևում՝ 1,0 մետր։ Այսպիսի կոնստրուկցիան առավել նպատակահարմար է երկար և առանց կոնտրֆոլսների պարսպապատերի կայունությունն ապահովելու համար։ Հետաքրքրական է, որ շինարարական նման հնարքի մենք հանդիպում ենք Նղեգնաձորին հարևան Սևանա լճի ավազանում գտնվող Մաքենացոց վանքում, կառուցված IX—X դարերում[4]։

Գնդեվանքի XVII դարի պաշտպանական կառուցվածքները հորինվածքի հատակագծային-ծավալային լուծման մի շարք հատկանիշներով նման են Շատին վանքի կառուցվածքներին։ Այսպես, հարավային պարսպապատը, ինչպես և Շատին վանքում, ուժեղացված է բուրգերով և բակի կողմից ունի կից, նույնպես երկհարկանի շինություններ։

Վանքի երկու մուտքերից խոշորը և հիմնականը տեղադրված է կոմպլեքսի հյուսիս-արևմտյան մասում՝ հյուսիսային պարսպապատում։ Հետաքրքրական է մուտքի հորինվածքը՝ դարպասի վերևում կա պահակատուն, որի առկայությամբ մուտքը վերածվել է ուղղանկյուն աշտարակի։ Անմիջական վտանգի դեպքում այս պահակատունը կարող է վերևից ուղղված կրակով ապահովել վանքի գլխավոր մուտքի պաշտպանությունը։ Նման ուղղանկյուն աշտարակով մուտքի մենք հանդիպում ենք Անբերդում։ Այստեղ բերդի հյուսիս-արևմտյան մուտքը նույնպես վերևում՝ դարպասի վրա ունի հրակնատներով աշտարակաձև շինություն՝ դարպասը պաշտպանելու համար[5]։

XVII—XVIII դարերում իր պաշտպանական սիստեմը ստացավ նաև Տաթևի վանքը։ Կառուցված լինելով անդնդախոր ձորի եզրին, վանքը հարավից և մասամբ արևմուտքից պաշտպանական կառուցվածքների կարիքը չունի։ Իսկ բնական արգելքներից զուրկ հյուսիսային կողմում XVIII դարում կառուցվել է պարսպապատ, որը XVIII դարի վերջին լրացվել է երկու կլոր բուրգերով՝ կոմպլեքսի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան անկյուններում։

Սյունիքի XVII դարի կրոնական կոմպլեքսներից բուրգերով պարիսպներ ունեցել է և Շնհերի կուսանաց անապատը[6]։ Սակայն եղած երեք բուրգերից և ոչ մեկը այժմ չի պահպանվել։

Առանց բուրգերի Սյունիքում կառուցված են Տաթևի Մեծ անապատը և Կնեվանքը (Բեխի, Հալիձորի Հարանց, Մալևի անապատների պարսպապատերից միայն հետքերն են մնացել, և դժվար է ասել՝ ունեցել են նրանք բուրգեր, թե ոչ)։

Կնեվանքը շրջապատված է հատակագծում կանոնավոր ուղղանկյան ձև

---

4 Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 206։

5 Ս. Վ. Հարությունյան, Անբերդի պաշտպանական սիստեմը։ «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1967, № 1, էջ 142։

6 Ե. Լալայան, Զանգեզուրի գավառ, հատոր Բ, Թիֆլիս, 1899, էջ 42։

ունեցող պարիսպներով։ Նման հորինվածքն արդյունք է հարմար՝ հավասարաչափ, փոքր թեքություն ունեցող հարթ տեղանքին։ Պարիսպները կառուցված են ճեղքված բաղալտից և գետաքարից, կրաշաղախով, 1,30—1,20 մ. լայնությամբ։ Կնեվանքի պաշտպանական այս համեստ սիստեմը, հավանաբար, համապատասխանել է վանքի տնտեսական վիճակին։ Բայց սա փոխհատուցվում է կոմպլեքսի հաջող տեղադրումով. թեք սարալանջի վերևում, դագաթի մոտ։

Տաթևի Մեծ անապատի հատակագծային-ծավալային ողջ հորինվածքը պաշտպանական տեսակետից բավական հաջող է մշակված։ Համակառույցը շրջապատված է ուղղանկյուն հատակագծով հաստ և բարձր պարիսպներով։ Սրանց պարագծով, ներսից կառուցված միաբանության խցերի, կոմունալ և տնտեսական շինությունների հարթ տանիքները ծառայում են նաև որպես լավ պաշտպանված հարթակներ՝ մարտնչողներին պատսպարվելու և պարիսպների վրա գրոհող թշնամուն ղինված հակահարված տալու համար։ Պարիսպների անկյուններում կան վերնահարկեր՝ ուղղանկյուն հատակագծով պահակատներ։ Պարսպապատերը ղդալի բարձր են՝ դրսից մոտ 8 մետր և բացի երկու մուտքերից՝ չկան որևէ այլ բացվածքներ դեպի դուրս։ Խուլ և բարձր պատերն անթափանցելի են և պահանջում են հսկայական ջանքեր հարձակվողի կողմից՝ այն հաղթահարելու և պարիսպներից ներս անցնելու համար։

Տաթևի Մեծ անապատն ունի պաշտպանական համակարգն ուժեղացնող մի այլ հնարք, որն արտահայտվում է համակառույցի հատակագծային լուծման մեջ։ Հարավային կողմից մենաստանի ուղղանկյուն մասին կցված է սեղանաձև ընդհանուր հատակագծով օժանդակ շինությունների մի խումբ, որի շնորհիվ հիմնական՝ հարավային մուտքը բացվում է ոչ թե անմիջապես դեպի դուրս, այլ դեպի այս խմբի բակը։ Տնտեսական կառուցվածքների պատերը և բակի պարսպապատերը նույնքան հաստ են և բարձր, որքան հիմնական մասի արտաքին պարիսպները։ Շինությունների այս խումբը, կարելի է ասել, ծառայում է Անապատի համար որպես պաշտպանական համակարգի առաջին աստիճանը, որը թափանցելուց հետո միայն կարելի է մոտենալ մենաստանի դարպասին։

Տաթևի Մեծ անապատը պաշտպանական առումով եթե համեմատելու լինենք Սյունիքի այլ վանքերի և մենաստանների հետ, կտեսնենք, որ նույնիսկ բուրգերի բացակայության դեպքում միայն պարսպապատեր ունեցող այս համակառույցն իր անառիկությամբ չի զիջում այնպիսի վանք-ամրոցներին, ինչպիսին են Հալիձորի բերդը, Շատին վանքը, Տաթևը, Գնդեվանքը։

XVII—XVIII դդ. վանք-ամրոցների ճարտարապետական կերպարի, առանձին մանրամասների, կոնստրուկցիաների մեջ որոշակի երևում են միջնադարյան հայկական ամրոցաշինության հետ կապված դենետիկ կապը և միաժամանակ այն նորը, որն արդյունք է տվյալ ինքնատիպ զուգակցման առանձնահատկություններին։ Առաջինն արտահայտվում է ամրոցներին հատուկ այնպիսի ձևերի առկայությամբ, ինչպիսին բուրգերն են, աշտարակները, դարպասների վրայի պահակատները, հրակնատները և այլն։ Իսկ նորը կոմպլեքսի՝ վանքային և պաշտպանական շինությունների միաժամանակյա կառուցումն է միասնական մտահղացումով, երբ մենաստանի ողջ հորինվածքը ենթարկվում է պաշտպանության պահանջներին։

МОНАСТЫРИ-КРЕПОСТИ СЮНИКА XVII—XVIII ВВ.

М. М. АСРАТЯН

Резюме

В отличие от других областей исторической Армении, в Сюнике строительство крепостей продолжалось до позднего средневековья. К оборонительным сооружениям Сюника XVII—XVIII вв. относятся не только сами крепости, но и монастыри—Шатинский, после реконструкции— Татевский и Гндеванк, Алидзорская обитель (в дальнейшем известная под названием Алидзорская крепость), Большая Татевская обитель и другие.

В архитектуре монастырей этого периода интересно органичное сочетание двух разных композиций — религиозного комплекса и оборонительного сооружения. Такое сочетание оказалось настолько удачным, что Алидзорская обитель в XVIII в. стала неприступной крепостью Давид-Бека и центром независимого Кафанского княжества.